ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 186 - Ա
23 հոկտեմբերի 2013 թ.

ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 77^1, 77^2, և 77^3 հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Վարդենիկ համայնքի ղեկավարին՝
   1) համայնքի բյուջեի կատարման մասին եռամսյակային հաղորդում ներկայացնել ավագանուն՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի պահանջների.
   2) հարկերը ժամանակին չվճարողների նկատմամբ կիրառել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները.
   3) առևտրի և ծառայությունների բնագավառում հսկողությունն իրականացնել <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան.
   4) համայքնի ղեկավարի կողմից առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ պարբերաբար մարզպետարան ներկայացնել հաշվետվություն <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան.
   5) <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով հաստատել համայնքի ավագանու

կանոնակարգը և այն ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման.

6) <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի համաձայն հաստատել <<Վարդենիկի մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի կանոնադրությունը.

7) վարել համայնքի ղեկավարի, ավագանու և համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերի հաշվառման մատյանները.

8) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ նոյեմբերի 1-ը:

2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ